ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Լոռի Բերդ, (0256) 2-14-75, loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 ապրիլի 2026 թվականի N 163-Ա

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԱԿՏԻՎՆԵՐԻ ՌԵԵՍՏՐԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՌԵԵՍՏՐԻ ՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2026 թվականի փետրվարի 12-ի N 152-Ն որոշմամբ՝

որոշում եմ.

1. «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքապետարանի աշխատակազմ» համայնքային կառավարչական հիմնարկում ձևավորել տեղեկատվական տեխնոլոգիաների (այսուհետ՝ ՏՏ) ակտիվների ռեեստր՝ տեղեկատվության համակարգված պահպանման, վերլուծության, թարմացման և կառավարման ապահովման նպատակով:
2. ՏՏ ակտիվների ռեեստրի ձևավորման և վարման համար պատասխանատու նշանակել՝
Լոռի Բերդ համայնքի ղեկավարի տեղակալ Էդուարդ Մելիքսեթյանին՝ վերապահելով ՏՏ ակտիվների գույքագրման կազմակերպման, տվյալների հավաքագրման, ռեեստրի կազմման, վարման, թարմացման, ճշգրտության և վավերականության ապահովման լիազորությունները:
3. Ռեեստր վարող պատասխանատուին՝
ա/ իրականացնել ՏՏ ակտիվների գրանցումը և թարմացումը առնվազն տարեկան երկու անգամ՝ կիսամյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում, ինչպես նաև անհապաղ՝ նոր ակտիվի ձեռքբերման կամ օտարման դեպքում,
բ/ յուրաքանչյուր կիսամյակի ավարտից հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացնել սահմանված հաշվետվությունները համապատասխան մարմիններին,
գ/ ապահովել ռեեստրի տվյալների պաշտպանությունը, հասանելիության սահմանափակումը և տեղեկատվական անվտանգության պահանջների պահպանումը:

4. Սույն որոշման կատարման վերահսկողությունը դնել աշխատակազմի քարտուղար Անի Մարտիրոսյանի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՐԱՅԻԿ ՆԵՐՍԻՍՅԱՆ

2026թ. ապրիլի 23
գ.Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 23 » ապրիլի 2026թ. № 164-Ա

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝«Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի1-ին մասի7-րդ, 8-րդ կետերով և հիմք ընդունելով «ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի 2024 թվականի բյուջեն հաստատելու մասին» Լոռի Բերդ համայնքի անագանու 25.12.2024թ. թիվ 80-Ն որոշման 5-րդ մասի 2-րդ կետը՝

որոշում եմ.

1. Լոռի Բերդ համայնքի 2026թ. բյուջեի 01-01-01դասակարգմամբ«կառավարման ապարատ» նախահաշվում կատարել հետևյալ փոփոխությունները.

1.1 4111 հոդվածով սահմանված 122.850.000 (մեկ հարյուր քսաներկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 30.712.500 (երեսուն միլիոն յոթ հարյուր տասներկու հազար հինգ հարյուր) դրամ,

2-րդ եռամսյակ – 58.425.000 (հիսունութ միլիոն չորս հարյուր քսանհինգ հազար) դրամ,

3-րդ եռամսյակ – 91.237.500 (իննսունմեկ միլիոն երկու հարյուր երեսունյոթ հազար հինգ հարյուր) դրամ,

4-րդ եռամսյակ – 122.850.000 (մեկ հարյուր քսաներկու միլիոն ութ հարյուր հիսուն հազար) դրամ:

1.2. 4112 հոդվածով սահմանված 9.000.000 (ինը միլիոն) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 3.300.000 (երեք միլիոն երեք հարյուր հազար) դրամ,

2-րդ եռամսյակ – 6.000.000 (վեց միլիոն) դրամ,

3-րդ եռամսյակ – 8.000.000 (ութ միլիոն) դրամ,

4-րդ եռամսյակ - 9.000.000 (ինը միլիոն) դրամ:

1.3. 4212 հոդվածով սահմանված 8.000.000 (ութ միլիոն) դրամը ըստ եռամսյակների սահմանել հետևյալ չափերով.

1-ին եռամսյակ – 4.600.000 (չորս միլիոն վեց հարյուր հազար) դրամ,

2-րդ եռամսյակ – 8.000.000 (ութ միլիոն) դրամ ,

3-րդ եռամսյակ – 8.000.000 (ութ միլիոն) դրամ,

4-րդ եռամսյակ - 8.000.000 (ութ միլիոն) դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման օրվանից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Կ.Տ.

2026թ. ապրիլի 23

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի փող., 7

հեռ.՝ 0256-2-14-75
էլ. փոստ՝ loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2026թ. № 165-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԳԱՐԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-009-0027-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.06542 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ ՀՀ կառավարության 29.12.2011թ. թիվ 1920-Ն որոշմամբ, ՀՀ հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Լոռի Բերդ համայնքի ավագանու գոտիավորման նախագիծը հաստատելու մասին 10.05.2024թ. թիվ 32-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետի 16.05.2024թ. «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ-8 ՄԻԿՐՈՌԵԳԻՈՆԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՀԱՄԱԿՑՎԱԾ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՊԼԱՆԱՎՈՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՀԱՏԱԿԱԳԾՄԱՆ ՄԱՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ» թիվ 259-Ա որոշումը, Լոռի Բերդ համայնքի գլխավոր հատակագիծը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Լոռի Բերդ համայնքի Ագարակ գյուղում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 06-009-0027-0003 կադաստրային ծածկագրով 0.06542 հա մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության այլ հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ անշարժ գույքի կադաստրի կոմիտեի միասնական ստորաբաժանումում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2026թ. ապրիլի 28
Գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«28» ապրիլի 2026թ. № 166-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լեջան բնակավայրի 06-038-0024-0027 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Լեջան բնակավայր, 5-րդ փողոց, 2 բնակելի տուն փոստային հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

կ.տ

2026թ. ապրիլի 28

գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ գ. Լոռի Բերդ
հեռ. 0256-2-14-75
էլ. փոստ: loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 28 » ապրիլի 2026թ. № 167-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2026 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 10-Ի ԹԻՎ 22-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 71-րդ հոդվածի 3-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրի 6-րդ փողոց, 2-րդ փակուղի, տուն 1 հասցեի բնակիչ՝ Հայրապետ Սամվելի Ջուլհակյանի (անձնագիր՝ AS0224405, տրված՝ 11.06.2018թ., 053-ի կողմից) կողմից տրված դիմում-համաձայնագիրը՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի սեփականություն հանդիսացող, Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրում գտնվող՝ 06-105-0312-0024 կադաստրային ծածկագրով 0.10167 հա մակերեսով (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման 17022026-06-0040 վկայական) արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասը փոխանակել՝ Հայրապետ Սամվելի Ջուլհակյանին պատկանող Լոռի Բերդ համայնքի Ուռուտ բնակավայրում գտնվող՝ 06-105-0312-0026 կադաստրային ծածկագրով (անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցման 10022026-06-0041 վկայական) 0.102313 հա մակերեսով արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողամասի հետ:

2. Հողամասերի փոխանակության պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ դրանից ծագող իրավունքը՝ պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի ստորաբաժանումում:

3. Սույն որոշումից բխող բոլոր գույքային իրավունքների պետական գրանցման, հողամասի հատակագծի հաստատման, պայմանագրի նոտարական վավերացման,

ինչպես նաև օրենսդրությամբ նախատեսված միասնական տեղեկանքներ ստանալու համար ծախսերը և այլ անհրաժեշտ վճարումներն իրականացվում են Հայրապետ Սամվելի Ջոպհակյանի կողմից:

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

կ.տ.
2026թ. ապրիլի 28
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» ապրիլի 2026թ. № 168-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի 06-044-0016-0016 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Լոռի Բերդ, բնակավայր Զորավար Անդրանիկի փողոց, 30 բնակելի տուն հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.Տ.

2026թ.ապրիլի 29
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ
ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7
Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ: loriberdhamaynq2017@.ru

ՈՐՈՇՈՒՄ
«29» ապրիլի 2026թ. № 169-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ԳՅՈՒՂԻ 06-044-0016-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՉԱՓԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Խաչատուր Հովիկի Բալայանի կողմից ներկայացված դիմումը, 17.05.2011թ., թիվ 2506731 անշարժ գույքի սեփականության (օգտագործման) իրավունքի գրանցման վկայականը, «ՍԱՄՎԵԼ ԿԱՄՍԱՐԻ ՖՐԱՆԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից տրամադրված տեղագրական հատակագիծը, ղեկավարվելով՝ «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով և 43-րդ հոդվածով, ՀՀ կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ

1. Ճշտել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Լոռի Բերդ բնակավայրի Զորավար Անդրանիկի փողոց, 30 բնակելի տուն հասցեում գտնվող, 06-044-0016-00016 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի սահմանային չափերը՝ համաձայն «ՍԱՄՎԵԼ ԿԱՄՍԱՐԻ ՖՐԱՆԳՅԱՆ» ԱՁ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի, ըստ որի հողամասի մակերեսը կազմում է 0.48 հա:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից, որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումու

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ**

Է.տ
2026թ. ապրիլի 29
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«05» մայիսի 2026թ. № 170-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 06-009-0027-0003 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Ագարակ բնակավայր 14 փողոց, 1-ին փակուղի, թիվ 2 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ.

2026թ. մայիսի 05
գ. Լոռի Բերդ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ, Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք,
գ. Լոռի Բերդ, Աշոտ Երկաթի 7

Հեռ. 0256-2-14-75
Էլ. փոստ.Loriberdhamaynq2017@mail.ru

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«06» մայիսի 2026թ. № 171-Ա

ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետի և ՀՀ կառավարության 29 դեկտեմբերի 2005թ. N2387-Ն որոշման պահանջներով՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի Ագարակ բնակավայրի 06-009-0038-0026 կադաստրային ծածկագրով անշարժ գույքին տրամադրել՝ ՀՀ Լոռու մարզ, Լոռի Բերդ համայնք, Ագարակ բնակավայր 13 փողոց, թիվ 4/1 հողամաս փոստային հասցեն:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՆԵՐՍԻՍՅԱՆ

Կ.տ

2026թ. մայիսի 06
գ. Լոռի Բերդ